Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի 2013թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին

1. **ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի 2013թ. գործունեության կարևոր արդյունքներից** կարելի է առանձնացնել հետևյալը.

ա) Լույս է տեսել կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների ժողովածուի 15-րդ հատորը /«Գիտություն», 188 էջ/ և պատրաստվել է հրատարակման ժողովածուի 16-րդ հատորը՝ 13 տպագր. մամուլ ծավալով: Հրատարակվել է «Տայքի վարչաժողովրդագրական պատկերը XVI-XIX դդ.» մենագրությունը /213 էջ/:

բ) Հոկտեմբերին Կենտրոնը կազմակերպել է «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» խորագրով եռօրյա միջազգային գիտաժողով՝ ԱՊՀ յոթ երկրների 42, արտերկրի 8 և հայաստանյան 80 մասնակիցներով, հրատարակել գիտաժողովի նյութերի ժողովածուն՝ 27 տպագր. մամուլ ծավալով /»Գիտություն » 432 էջ/:

գ) Կազմակերպել և անցկացրել է «Ավանդական երաժշտության և աշուղական արվեստի» միջազգային փառատոն՝ 5 երկրների կատարող երաժիշտ վարպետների և աշուղների մասնակցությամբ:

դ) Քաղաքի օրվա կապակցությամբ Կենտրոնը Գյումրիում առաջին անգամ կազմակերպել և անցկացրել է «Հացի տոն» ազգագրական մեծ փառատոն՝ հանրապետության բոլոր մարզերի մասնակցությամբ:

ե) Ախուրյանի ավազանի մ.թ.ա. առաջին հազարամյակի պատմության վերաբերյալ սեպագիր աղբյուրների ուսումնասիրության հիման վրա բացահայտվել են հայ առասպելաբանության նոր, խորքային շերտեր, որոնք գիտականորեն հիմնավորում են տարածքի հնագույն հնդեվրոպական-հայկական բնակչություն ունենալու իրողությունը:

զ) Կենտրոնի հնագետների կողմից Շիրակի մարզում հայտնաբերվել են նոր հնավայրեր. ուշերկաթիդարյան դամբարանադաշտ Գյումրու տարածքում, վաղ միջնադարի բնակավայր Ղազանչի համայնքի տարածքում, վաղբրոնզիդարյան բնակավայր և դամբարանադաշտ Եղնաջուր համայնքի տարածքում, վաղերկաթիդարյան դամբարանադաշտեր Ջրաձորում:

2. **Բազային ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները 2013թ.**

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնը 2013թ. շարունակել է իրականացնել 2010 թվականից սկիզբ առած «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ–2» ծրագիրը՝ (ղեկ.՝ բ.գ.դ. Ս.Հայրապետյան):

2013թ. կենտրոնի հնագետների խումբը (ղեկավար՝ պ.գ.թ. Լ.Եգանյան. Հ. Խաչատրյան. Ն.Խաչատրյան) շարունակել է պլանային պեղումները Մեծ Սեպասարի վաղբրոնզիդարյան հնագիտական հուշարձանի տարածքում /հուլիս/, Ազատանի մ.թ.ա. 9-8-րդ դարերի ամրոց-բնակավայրում ու դամբարանադաշտերում /օգոստոս/ և Հայկաձորի վաղերկաթիդարյան ամրոց-բնակավայրում /նոյեմբեր/: Իսկ տարեսկզբից մինչև մայիս ամիսը կատարվել է նախորդ տարվա պեղումներով վերոնշյալ հնավայրերից հայտնաբերված նյութերի կամերալ ուսումնասիրություն և վերականգնողական աշխատանք: Ընդհանուր առմամբ ավարտին են հասցվել կենտրոնի հնագետների ուժերով վեց տարի առաջ սկսված Մեծ Սեպասարի հնագիտական հուշարձանի՝ տաճարական համալիրի տարածքում Հայաստանի առայժմ միակ վաղբրոնզիդարյան սրբարանի պեղումները: Դա իրական հնարավորություն է տալիս ամբողջացնելու տաճարական համալիրի, սրբարանի և հարակից բնակելի կառույցների հատակագծային պատկերը, վերջնականորեն ճշգրտելու գտածո նյութերի թվագրությունը, ինչպես նաև՝ տիպաբանական աղերսներն այլ հնավայրերի հետ: Աշխատանքների արդյունքները. 4 հոդվածների տպագրություն /երկուսը արտերկրում/,գիտական զեկույցներով մասնակցություն հինգ միջազգային գիտաժողովներում /Երևան, Գյումրի, Սանկտ-Պետերբուրգ, Մոսկվա/: Հաշվետու տարում խմբի կողմից հայտնաբերվել են նաև չորս նոր հնավայրեր Շիրակի մարզի տարածքում:

- «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություն-2» ծրագրի շրջանակներում 2013-ին շարունակվել է հայոց պատմության համատեքստում պատմական գավառի հնագույն, հին և նոր շրջանների պատմության մի շարք հիմնախնդիրների ուսումնասիրությունը: Մասնավորապես ճշգրտվել է էթիունյան Վիտիրուխի /նաև Լուշա և Կաթարզա/ ցեղային երկրների տեղադրությունները: Հակառակ այսօր էլ գերակշռող տեսակետի, դրանք մանր ցեղային երկրներ են եղել և գտնվել են Ախուրյան գոտի ավազանում, իսկ նրանցից Վիտիրուխին՝ հարավ-արևմտյան Շիրակում: Պարզվել է, որ Սևանի ավազանի Արագածի ձկնակերպ «վիշապ» կոթողները առնչվում են առասպելաբանական ձկնամարդու պաշտամունքին, որի արձագանքն է առկա նաև Վարդգես Մանուկի մասին ավանդազրույցում (պ.գ.դ. Ս.Պետրոսյան), ճշգրտվել է նաեւ Նաիրյան

երկրների դեմ մ.թ.ա. 1112թ. Ասորեստանի թագավոր Թիգլաթփալասար Առաջինի ձեռնարկած արշավանքի նկարագրության մասին սեպագիր արձանագրության մեջ հիշատակված Շախի-Շարա և Խաշտ-Արայե լեռնանունների նույնականության հարցը Արագած և Արա լեռնանունների հետ: Դրա հիմնավորումը հնարավոր է դարձնում հաստատել նաև արդի ՀՀ և ԼՂՀ տարածքների՝ հնագույն հնդեվրոպական-հայկական բնակչություն ունենալու իրողությունը:

2013-ին Կենտրոնում հրատարակվել է Շիրակին հարակից Տայքի 16-19-րդ դդ. վարչաժողովրդագրական կացության ուսումնասիրությանը նվիրված մենագրություն (պ.գ.թ. Ա.Ակոպով), շարունակվել է նաև 1917-1918թթ. ընթացքում Ալեքսանդրապոլի գավառի տարածքում արևմտահայ գաղթականության տեղաբաշխման և գավառի էթնոժողովրդական պատկերի վրա գաղթերի թողած ազդեցության վերաբերյալ արխիվային նյութերի հավաքման և վերլուծության ուղղությամբ տարվող աշխատանքը (պ.գ.թ.Ա.Հայրապետյան), որն ամփոփվել է գրախոսվող հանդեսներում 2 խոշոր հոդվածներով, ինչպես նաև միջազգային գիտաժողովում արված զեկուցմամբ (2013-ի հոկտեմբեր, Գյումրի): Շարունակվել է նաև Ալեքսանդրապոլի կրթական և մշակութային հաստատությունների, քաղաքում գործող բարեգործական ընկերությունների գործունեությանը (պ.գ.թ.Գ.Այվազյան), ինչպես նաև գավառի սոցիալ-տնտեսական, հասարակական և քաղաքական կյանքի, մասնավորապես Հայաստանի առաջին հանրապետության տարիներին Ալեքսանդրապոլի տեղական ինքնակառավարման մարմինների և կենտրոնական իշխանությունների բարդ փոխհարաբերությունների, գավառի թուրքական ռազմակալման շրջանում ստեղծված տեղական իշխանության մարմինների գործունեության ուսումնասիրությունը (պ.գ.թ.Կ.Ալեքսանյան): Այս հարցերն են արծարծվել տպագրված չորս (մեկը արտերկրում) և տպագրության հանձնված երկու (մեկը արտերկրում) հոդվածներում: Շարունակվել են «Ալեքսանդրապոլի գավառը ցարական մարդահամարներում. 19դ-20-րդ դարասկիզբ» /16 տպ. մամուլ/ և «Ալեքսանդրապոլի գավառը 1918-1922թթ. /12 տպ. մամուլ/» փաստաթղթերի ժողովածուների կազմման աշխատանքները, որոնք իրականացվում են ԳԱԱ պատմության ինստիտուտի, ՀՀ Ազգային արխիվի և այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

- Շարունակվում է Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրի պատմազգագրական ծավալուն ուսումնասիրության երկրորդ մասի իրականացումը՝ նվիրված քաղաքի Լենինականյան ժամանակահատվածի ազգագրական դիմագծի ամբողջացմանը (պ.գ.թ. Կ.Բազեյան), որի

առանձին շտրիխներ՝ տնտեսական կյանքի, հայրենադարձության նշանակության ու ժողովրդագրական տեղաշարժերի, գյուղական բնակչության դեպի քաղաք միգրացիայի, մշակույթի ու արվեստի հարցերը կենտրոնի ազգագրագետների ուշադրության կենտրոնում էին 2013 թվականին: ՀՀ ազգային արխիվի, նրա քաղաքային մասնաճյուղի, մասնավոր հավաքածուներում պահպանվող փաստական հարուստ նյութի վերլուծության հիման վրա քննության են ենթարկվել (պ.գ.թ. Ա.Բոյաջյան) խորհրդային սկզբնական շրջանում Լենինական քաղաքի արդյունաբերականացմանը, քաղաքային արհեստներին ու տնտեսական զբաղմունքներին վերաբերող հարցեր, նրա բնակչության բնական վերարտադրության (ծնունդ, մահ, բնական աճ) ու միգրացիոն գործընթացների առանձնահատկություններ:

- Ազգագրության բնագավառում Կենտրոնի 2013թ. ձեռքբերումներից մեկը մեր ազգային ոգու, նկարագրի ու ավանդույթի պահպանմանը միտված «Հացի փառատոնի» կազմակերպումն ու իրականացումը եղավ /13 հոկտեմբերի/՝ ժողովրդական տոնի պահպանման, վերաիմաստավորման և թարմացման իր արդյունավետ լուծումներով, հանրապետության մեջ իր մեծ արձագանքով (համակարգող՝ հ.գ.թ. Կ.Սահակյան): Կենտրոնի ազգագրագետների խումբը կազմակերպվել է երկու գիտարշավներ մարզի գյուղական համայնքներում (Փանիկ, Հառիճ, Սառնաղբյուր, Նոր կյանք և այլն)՝ ժողովրդական և հմայական աղոթքների արդի դրսևորումների, ցանկության բանաձևերի գրառման նպատակով:
- 2013-ին ԳԱԹ-ի, ՀՀ ազգային պատկերասրահի, ազգային արխիվի, թանգարանների, պատկերասրահների ու մասնավոր հավաքածուների հետ համագործակցությամբ շարունակվել է Գյումրու գեղարվեստի պատմության ուսումնասիրությունը (մ.գ.թ. Լ.Աթանեսյան), ընթացքի մեջ է Կարնո բարբառի Գյումրու խոսվածքի արդի վիճակի համակողմանի նկարագրությունը զարգացման այն միտումների համատեքստում, որ ունեցել է խոսվածքն իր վերջին մեկ դարի ընթացքում, հատկապես խորհրդային տասնամյակներին և մասնավորապես անկախացումից հետո (բ.գ.դ. Ս.Հայրապետյան): Առանձնակի ուշադրություն է դարձվում արդի միգրացիոն ժողովրդագրական գործընթացներին ու տնտեսական-քաղաքական գործոններին, որոնք իրենց կնիքն են դրել խոսվածքի հետագա ձևափոխումների վրա: Արված աշխատանքն ամփոփված է երկու հրապարակումներում և միջազգային գիտաժողովի մեկ հաղորդման մեջ:
- 2013-ին Կենտրոնում շարունակվել է Շիրակի ժողովրդական և ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության արդի խնդիրներին և զարգացման միտումներին նվիրված նախորդ տա-

րիների աշխատանքը (արվ.թ. Հ.Հարությունյան): Ուշադրության կենտրոնում են եղել ժողովրդական երգի ու պարերի արդի փոխակերպումները Գյումրիում և մարզի տարբեր գյուղական բնակավայրերում: Կազմակերպվել և մեծ հաջողությամբ իրականացվել է «Ավանդական երաժշտության և աշուղական երգարվեստի միջազգային փառատոն»՝ չորս երկրների և մեր հանրապետության երաժիշտ կատարողների և աշուղների մասնակցությամբ: Միաժամանակ կատարվել է Շիրակի երաժշտական բանահյուսության շուրջ 30 նմուշների վերծանում և համակարգչային մշակում, երկու ազգագրական-երաժշտագիտական գիտարշավներ մարզի տարածքում, հրատարակվել երկու հոդված և միջազգային գիտաժողովի մեկ զեկուցում:

Կենտրոնի 2013թ. գիտակազմակերպչական գործունեության բարձրակետը եղավ հոկտեմբերի 4-6-ին գումարված «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» խորագրով եռօրյա միջազգային գիտաժողովը՝ ԱՊՀ յոթ երկրների 42, արտերկրի 8 և հայաստանյան 80 մասնակիցներով:«Գիտություն» հրատարակչությունը տպագրել է գիտաժողովի նյութերի ժողովածուն՝27 տպ. մամուլ ծավալով /432 էջ/:

5. 2013թ. հրապարակումների ցանկը

Մենագրություններ

1. Ակոպով Ա.Ա., Տայք. Տայքի վարչաժողովրդագրական պատկերը XVI դարից մինչեւ XIX առաջին երեսնամյակը, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2013, 213 էջ:

Հոդվածներ

1. Աթանեսյան Լ.Գ., Սուսաննա Մկրտչյան արվեստագետը, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, Եր., 2013, էջ 132-139:
2. Այվազյան Գ., «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» Ալեքսանդրապոլի մասնաճյուղի գործունեությունը 1884-1899 թվականներին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, Եր., 2013, էջ 132-138:
3. Ակոպով Ա.Ա., Տայքի ազգային պատկանելության հարցը պատմագիտության մեջ, Երիտասարդ գիտնականների ձեռքբերումներն ու հեռանկարները, Եր., «Գիտություն», 2013, էջ 15-24:

4. Ակոպով Ա.Ա., Արեւմտյան Շիրակը Կարսի գեներալ-նահանգապետի զեկուցագրերում (1890-ականներ), ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, Եր., «Գիտություն», 2013, էջ 212-130:
5. Ավագյան Ի.Է., Շիրակի վարչական բաժանումը Ք.ա. VIII-VIդդ., ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, Եր., «Գիտություն», 2013, էջ 39-47:
6. Ալեքսանյան Կ.Վ., Արևմտահայ գաղթականութեան դրութիւնը Ալեքսանդրապոլի գավառում 1918-1921թթ., Հայկազեան հայագիտական հանդէս,Պեյրութ, 2013, էջ 83-100:
7. Ալեքսանյան Կ.Վ., ՀՀ պետական իշխանության և Ալեքսանդրապոլի ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները 1918-1920թթ.,ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, Եր., «Գիտություն», 2013, էջ 57-63:
8. Ալեքսանյան Կ.Վ.,Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1921թթ., Հայագիտությունը դպրոցում, Եր., թիվ 3, 2013, էջ 3-26:
9. Բոյաջյան Ա.Գ., Հայաստանի բնակչության ժողովրդագրական գործընթացներն անցումային շրջաններում, ՀՀ կրթության եւ գիտուտյան նախարարության Գյումրում Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի գիտական տեղեկագիր, պրակ Բ., Գյումրի 2013թ., էջ 87-97:
10. Բոյաջյան Ա. Գ., Գյուղատնտեսության դրությունն Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառում XIXդ. վերջին XXդ. առաջին կեսին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, Եր., «Գիտություն», 2013, էջ 39-47:
11. Բազեյան Կ.Ռ., Վասպուրականի ասեղնագործության առանձնահատկությունները, Հայաստանի մայրաքաղաքները, գիրք I, Վան, Երևան 2013, էջ 280-288:
12. Բազեյան Կ.Ռ., Լենա Գորգինյան. Հայկական ասեղնագործ ժանյակի նոր մեկնաբանը /ալբոմ/, Երևան 2013, էջ 14-25 (հայերեն և անգլերեն լեզուներով):
13. Եգանյան Լ.Գ. Քուռարաքսյան մի կարասի զարդագոտու սիմվոլիկայի շուրջ, ԳԱԱ ՇՀ Հ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, Գյումրի, 2013թ., էջ 32-38 :
14. Եգանյան Լ.Գ. Գլխի զոհաբերությունը վաղբրոնզիդարյան Մեծ Սեպասարում, ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, Գյումրի, 2013թ., էջ 13-20:
15. Հայրապետյան Ա.Ս., Գյումրի, Վաղազույն ժամանակներից մինչև մեր օրերը, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքը, (հեղինակային կոլեկտիվ), «Էլդորադո», Գյումրի, 2013, էջ 3-10:

16. Հայրապետյան Ա.Ս., Մտորումներ Ալեքսանդրապոլի հայ-թուրքական պայմանագրի մասին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.15, «Գիտություն», Եր., 2013, էջ 63-68:
17. Հայրապետյան Ա. Ս., 1829-1831թթ. Արևելյան Շիրակում հաստատված կարսեցի վերաբնակների թվաքանակի շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես», հ. 3, «Գիտություն», Եր., 2013:
18. Հայրապետյան Ս.Ա., Գյումրու արդի խոսվածքի հասարակական տարբերակվածությունը, ՎՊՄԻ հանրապետական գիտաժողովի նյութեր, Եր., 2013, էջ 50-58 :
19. Հարությունյան Հ.Հ., Շիրակյան պարեղանակները Ա.Բրուտյանի գրառումներում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, «Գիտություն», Եր., 2013, էջ 143-148:
20. Պետրոսյան Լ. Ս., Դիցական գլխավոր եռյակը Երվանդական և Արտաշիսյան Հայաստանում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, «Գիտություն, Եր., 2013, էջ 21-26:
21. Մեծ Հայքը Երվանդունյաց թագավորության դարաշրջանում (մ.թ.ա. IVդ. վերջին տասնամյակներ – մ.թ.ա. III դարի վերջ), թեկնածուական ատենախոսություն:
22. Պետրոսյան Ս.Գ., Պատմականն ու առասպելականը Վարդգես Մանուկի ավանդազրույցում, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, «Գիտություն, Եր., 2013, էջ 27-31:
23. Պետրոսյան Ս. Գ., Քսենոփոնյան «Հնդիկ»-ի թագավորությունը և սեպագրային Էթիունին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»,հ.15, «Գիտություն, Եր.,2013, էջ 5-12:
24. **Սահակյան Կ.Ա., Հովհաննիսյան Ռ.Պ.**, Հացին առնչվող ժողովրդական պատկերացումներ եւ հավատալիքներ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, Եր., «Գիտություն», 2013, էջ 79-87:
25. **Базеян К.Р.,** Аганян Г.Т., Городское самоуправление и органы власти Александраполя по архивным материалам, International science conference dedicated to 135th anniversary of reurning Ajara to motherland SOUTH- WEST GEORGIA (HISTORY, ARHAEOLOGY, ETHNOLOGY) CONFERENCE MATERIALS, Tbilisi 2013, p. 102-106.
26. **Yeganyan L.G., Khachatruan H.H.,** Mauermann D., Furtwangler A., Neuser T., Petrosyan L., Die bewehrte Eben-Fortifikationsanlagen der Shirak-Ebene, The defended plain-fortified sites on the Shirak-Plateau, Arshalogie in Armenien II, Harald Meller/Pavel Avetisyan, Band 67, 2013, p.167-190.

27. **Еганян Л.Г.,** Худавердян А., Деведжян С., Способы обращения с телами умерших в памятниках Ширакаван и Лори-берд, Вестник археологии и антропологии (Россия), 2013, ном. 4 (23), с. 72-85.

6. Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

տնօրեն՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սերգո Արտուշի Հայրապետյան,

գիտքարտուղար՝ արվեստագիտ. թեկն. Հասմիկ Հայկի Հարությունյան,

էլեկտրոնային փոստ՝ hkentron@mail.ru

կայք էջ՝ www shirakcenter.sci.am

7. Տվյալներ կադրերի վերաբերյալ

ա/ -

բ/ - 1

գ/ 4, 11, 5

8. Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

9. ա. Հ. Խաչատրյանը պարգեւատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով,

բ. Ս.Հայրապետյանը պարգեւատրվել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ոսկե մեդալով

10. ՇՀՀ կենտրոնը հաշվետու տարում համագործակցել է ԳԱԱ հայագիտական ինստիտուտների, ԵՊՀ-ի, ՀՊՄՀ-ի, ԳՊՄԻ-ի մի շարք հայագիտական ամբիոնների, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի, Հայաստանի պատմության ազգային, Հ. Շարամբեյանի անվան ժող. արվեստի, Գյումրու երկրագիտական եւ ժող. Ճարտարապետության ու քաղաքային կենցաղի թանգարանների, ԳԱԹ-ի եւ այլ պետական ու հասարակական կազմակերպությունների հետ: Համատեղողների թիվը՝ 8: 20013թ. համատեղ 9 հրապարակումներ են եղել Պատմության ինստիտուտի /2/, Արվեստի ինստիտուտի/1/, Հ.Շարամբեյանի անվ. թանգարանի /1/, Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի /3/, Հակեի համալսարանի գերմանական հնագիտական արշավախմբի /2/ հետ:

11. -

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝ **Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

գիտքարտուղար՝ **Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Աղյուսակ 1

Աղյուսակ 2

2013թ. ՀՀ ԳԱԱ թեմատիկայի ամփոփ տվյալներ

N	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (n) և ֆինանսավորման ծավալը (X հազ.դր.)			
		Նպատակային ֆինանսավորում	Բազային	Թեմատիկ	Տնտ. Պայմանագրեր
1	2		3	4	5
1	Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ		**24.857.200դր.**		

Աղյուսակ 3

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային միջոցառումները

N	Միջոցառումներ	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	Այդ թվում արտ. Երկրից
1	2	3	4	5
1	«Պատմամշակութային ժառանգություն եւ արդիականություն» միջազգային գիտաժողով	Գյումրի, 04-06 հոկտեմբերի, ԳԱԱ ՇՀՀ կենտրոն	**120**	50
2	Ավանդական երաժշտության փառատոն	Գյումրի, 03-06 հոկտեմբերի, ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, ՀՀ մշակույթի նախարարություն	**40**	**4**
3.	Հացի փառատոն	Գյումրի, 13 հոկտեմբերի, ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, ՀՀ մշակույթի նախարարություն	**80**	

Աղյուսակ 4

Աղյուսակ 5

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն ԳԱԱ կազմակերպություններում

N	Կազմակերպու-թյունը	Երկիրը	Ընդունված գիտնականների քանակը		
			Գիտաժողովներին մասնակցելու	Համատեղ գիտական աշխատանք կատարելու	Բանակցությունների և խորհրդաժողովներին համար
1	2	3	4	5	6
1	ՇՀՀ կենտրոն	Վրաստան, Բելառուս, Ուկրաինա, ՌԴ, Ղրղզստան, Ղազախստան, Թուրքմենստան, Տաջիկստան Ֆրանսիա, Գերմանիա, Լիբանան	3 2 4 30 2 2 1 3 2 1 1	1 1 2 2	

Աղյուսակ 6

Աղյուսակ 7

Կազմակերպության 2013թ. Ֆինանսավորման ծավալները

N	Կազմակերպությունը	Բյուջե	Արտաբյուջե	Դրամաշնորհներ		
				արտառժույթ ($,€, руб.)	Արժույթի կուրսը	Դրամ
1	2	3	4	5	6	7
	ՇՀՀ կենտրոն	37.857.200				

Աղյուսակ 8

ԳԱԱ գիտաշխատողների 2013թ. հրապարակումների ընդհանուր քանակը

N	Կազմակերպությունը	Մենագրություն, ժողովածու		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք		Հոդվածներ, զեկուցումներ		Թեզիսներ	
		Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.
1	2	3	4		5			6	7
	ՇՀՀ կենտրոն	1				23	4		

Աղյուսակ 9

Ասպիրանտների թվաքանակը

Կազմակերպությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 01.01.2013թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում կանայք)	
	ա/կ.	ա/չկ.	ա/կ.	ա/չկ.
1	2	3	4	5
ՇՀՀ կենտրոն		1		

Աղյուսակ 10

Աղյուսակ 11

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2013թ.

N	Կազմակերպությունը	Աշխատող ների ընդհա-նուր թիվը	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը	ԳԱԱ ակադեմիկ ոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	8
	ՇՀՀ կենտրոն	23	20			2	11

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝ Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ